ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/165

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/55» ծածկագրով գնանշման հարցում, բանջարեղենի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/55-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ. թիվ 01.1/26-1/15886-2019 գրությամբ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.09.2019թ. թիվ ՊՆ/02/1943-2019 գրության հիման վրա, 26.09.2019թ. «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 26.09.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 02.10.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 02.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.10.2019թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.09.2019թ. թիվ ՊՆ/02/1943-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպությունների միջև կնքված գնման պայմանագրերի 2.1.7.1 կետերի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. սեպտեմբերի 18-ին միակողմանի մասնակի լուծել է՝

1. Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի հետ 05.12.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/40-1 ծածկագրով գնման պայմանգիրը,

2. Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի հետ 05.12.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/55-1 ծածկագրով գնման պայմանգիրը,

3. Ա/Ձ Իշխան Միրզոյանի հետ 05.12.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/36-5 ծածկագրով գնման պայմանգիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրերի մասնակի լուծման վերաբերյալ գրությունները 19.09.2019թ. հրապարակվել են www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 27.09.2019թ. գրությամբ դիմել է «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ. թիվ 01.1/26-1/15886-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/165 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի միջև 05.12.2018թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/55-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ' Պայմանագիր):

Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Մատակարարը պարտավոր է յուրաքանչյուր մատակարարման ամսվա 1-ին, 10-րդ և 20-րդ աշխատանքային օրերին ներկայանալ ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայություն՝ մատակարարման ապրանքագրերը ստանալու համար:

www.gnumner.am համացանցային կայքում 19.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի միջև 05.12.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/55-1 գնման պայմանագրի շրջանակներում Մասնակիցը 2019թ. ապրիլ և մայիս

ամիսներին Սյունիքի տարածաշրջան պետք է մատակարարեր 2952-ական կգ բազուկ /Բազուկ ուշահաս/, սակայն չեն մատակարարվել համապատասխանաբար 228 կգ և 582 կգ, 2019թ. ապրիլ և մայիս ամիսներին Սյունիքի տարածաշրջան պետք է մատակարարեր 4880-ական կգ գազար /Գազար ուշահաս/, սակայն չեն մատակարարվել համապատասխանաբար 200 կգ և 2060 կգ:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. սեպտեմբերի 18-ին միակողմանի մասնակի լուծել է N ԳՀԱՊՁԲ-7/40-1 գնման պայմանագիրը՝ չմատակարարված ապրանքների մասով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ. թիվ 01.1/26-1/15886-2019 գրությամբ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի

բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն' պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.5 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավել՝ ապրանքագրով սահմանված ժամկետից:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ի միջև 05.12.2018թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/55-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Մատակարարը պարտավոր է յուրաքանչյուր մատակարարման ամսվա 1-ին, 10-րդ և 20-րդ աշխատանքային օրերին ներկայանալ ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայություն՝ մատակարարման ապրանքագրերը ստանալու համար:

www.gnumner.am համացանցային կայքում 19.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի միջև 05.12.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/55-1 գնման պայմանագրի շրջանակներում Մասնակիցը 2019թ. ապրիլ և մայիս ամիսներին Սյունիքի տարածաշրջան պետք է մատակարարեր 2952-ական կգ բազուկ /Բազուկ ուշահաս/, սակայն չեն մատակարարվել համապատասխանաբար 228 կգ և 582 կգ, 2019թ. ապրիլ և մայիս ամիսներին Սյունիքի տարածաշրջան պետք է մատակարարեր 4880-ական կգ գազար /Գազար ուշահաս/, սակայն չեն մատակարարվել համապատասխանաբար 200 կգ և 2060 կգ:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. սեպտեմբերի 18-ին միակողմանի մասնակի լուծել է N ԳՀԱՊՁԲ-7/40-1 գնման պայմանագիրը՝ չմատակարարված ապրանքների մասով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/55-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի Հավելված 1-ով նշվել է, որ Մատակարարն է պարտավոր յուրաքանչյուր մատակարարման ամսվա 1-ին, 10-րդ և 20-րդ աշխատանքային օրերին ներկայանալ ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայություն՝ մատակարարման ապրանքագրերը ստանալու համար, իսկ Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետով առկա պատասխանատվության միջոցը կարող է միայն արձանագրվել՝ ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայության կողմից տրված ապրանքագրով սահմանված ժամկետից՝ 10 օրից ավել խախտման դեպքում, ինչպես սահմանվել է Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետով, որն էլ հանդիսանալով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստ, սույն գործում առկա փաստերով չի ապացուցվում: Ավելին՝ ինչպես նաև չի հիմնավորվում, որ ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայության կողմից տրվել են ապրանքագրեր՝ մատակարարման ենթակա ապրանքների քանակների և ժամկետների վերաբերյալ, որն էլ սակայն

Մասնակցի կողմից չի իրականացվել: Այդ փաստերի առկայության դեպքում կարող էր միայն արձանագրվել Մասնակցի կողմից ժամկետի խախտումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ սույն գործում առկա Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցման ուսումնասիրության արդյունքում, պետք է արձանագրել, որ կողմերի միջև կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-7/55-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր, սակայն պատվիրատուն տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում հրապարակել է մեկ այլ՝ թիվ «ԳՀԱՊՁԲ-7/40-1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը լուծելու մասին ծանուցում, որում նկարագրվում է թիվ «ԳՀԱՊՁԲ-7/55-1» ծածկագրով պայմանագրով ստանձնած պարտաորությունների խախտումներ, այնինչ նշված փաստերից ելնելով լուծվել

է թիվ «ԳՀԱՊՁԲ-7/40-1» ծածկագրով պայմանագիրը: Ըստ էության Պատվիրատուի կամքը ուղված լինելով լուծելու թիվ «ԳՀԱՊՁԲ-7/55-1» ծածկագրով պայմանագիրը՝ պատշաճ չի իրականացվել:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթներով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում Պայմանագիր կնքած անձը չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված (ծանուցումը ստացված), ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները, այն է՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Ուստի, նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ. թիվ 01.1/26-1/15886-2019 գրությամբ «Վյաչեսլավ Ամիրջանյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/165 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**